

երբ մանաւանդ Միութիւնը իր կազմաւորումի շրջանին մէջ է տակաւին եւ պէտք կայ ուժեղ եւ կազմակերպեալ գործունէութեան:

ԱՌ ՈՐ ԱՆԿ Է

Ասկէ քանի մը ամիս առաջ Ֆիլատէլֆիայէն Պր. Յովհ. Աթթարեան նամակով մը Պր. Յակոբ Մուրատեանի կը գրէ, որ Հայկ պ գտնուող կարօտ Չնգուչիներու ցանկը իրեն դրուէ: Պր. Մուրատեան կը գրիմէ Զ. Վ. Մ. Հայկ պի մասնաճիւղի վարչութեան եւ խնդրուած ցանկը կ'ուզէ, որպէս զի Ամերիկա գրիմէ: Վարչութիւնն սիրով ընդունեց առաջարկը, միայն փափաք յայտնեց հասկնալու թէ՛ նամակը անհատական էր թէ պաշտօնական հանգամանք ունէր, միեւնոյն ատեն խնդրելով որ յիշեալ նամակը հաճի Վարչութեան ցոյց տալ: Պր. Մուրատեան պատասխանեց թէ նամակը անձնական էր՝ գրուած իր հօրքորդուոյն կողմէ, հետեւաբար չի կրնար ցոյց տալ զայն: Ասոր վրայ Վարչութիւնն նկատել տուաւ թէ անհատներու կողմէ անհատներու գրուած նամակներու չկրնար ընթացք տալ, քանի որ իրաւասութիւն չունի:

Այս բանաւոր պատճառաբանութենէն վերջ, սակայն, վարչութեան անդամներէն մին եւ շորս Չնգուչիի հայրենակիցներ, պիտոր ջուրի մէջ ձուկ որսալու առիթէն օգտուելով, խնամիական հաշիւներով ցանկ մը կը պատրաստեն եւ կը յանձնեն Պր. Յ. Մուրատեանի, որ միամտաբար կը զրկէ Ամերիկա:

Ատեն մը վերջ Ֆիլատէլֆիայէն Պր. Յովհ. Աթթարեան 93 անգլ. ոսկի նպաստ կը զրկէ Պր. Մուրատեանի անուն, համաձայն իրեն զրկուած ցանկին բաժնելու համար: Պր. Մուրատեան Վարչութեանս գրիմելով կը խնդրէ որ յիշեալ նպաստը բաժնելու գործին վրայ Վարչութիւնն հակադիմում դնէ: Այս գործին համար Վարչութեանս կողմէ նշանակուած ներկայացուցիչները պարմանքով կը տեսնեն որ 12-13 ոչ-Չնգուչիներու անուններ կան ցանկին մէջ. օրինակ, Չնգուչիի մը ոչ-Չնգուչի կնոջ ազգականը իրաւունք կ'ունենայ ցանկին մէջ մտնելու եւ նպաստ ստանալու:

Վարչութեանս արդարացի գիտողութեան վրայ, այդ ոչ-Չնգուչիներու նպաստ չտրուեցաւ: Խնդրեցինք Պր. Մուրատեանէ, որ մնացած գրամը տրուի 15-16 կարօտ Չնգուչիներու, որոնք ցանկէն դուրս մնացած էին: Պր. Մուրատեան մերժեց, առարկելով թէ նախ պէտք է Ամերիկայէն հաւանութիւն ստնուի: Բանաւոր էր:

Վեց ամիս առաջ, այդ ուղղութեամբ գրեցինք թէ՛ Զ. Վ. Մ. Ամերիկայի Կեդր. Վարչութեան եւ թէ Ֆիլատէլֆիայի մասնաճիւղին, բայց անպատասխանի մնացինք: Վարչութիւնն գրիմում կատարեց Պր. Մուրատեանի տեղեկանալու թէ ինքը ոեւէ հրահանգ ստացած է: Տրուած ժառանգական պատասխանին վրայ, խնդրեցինք անկէ որ գայթակղած մտքերը խաղաղեցնելու համար՝ իր քով մնացած գրամը Վարչութեանս յանձնէ, մինչեւ Ամերիկայէն գար սպասուած հրահանգը: Պր. Մուրատեան մերժեց, գիտել տալով որ անհատի մը կողմէ եկած նպաստի գրամը չկրնար Վարչութեանս յանձնել, կամ ցանկին մէջ գրուած անուններուն պիտի տայ եւ կամ ետ՝ տրորջը պիտի վերադարձնէ, միանգամայն միջոց տալով Վարչութեանս որ հարկ եղած լուսարանութիւնները, տեղեկութիւնները եւ հրահանգները առնէ Ամերիկայէն:

Վարչութիւնն վերստին գրեց Կեդր. Վարչութեան՝ ըստանալու իր հրահանգը: Սակայն, զժառանգարար, կրկին եւ կրկին անպատասխանի մնացինք: (Փակագծի մէջ ըսենք որ մենք այս եւ զանազան խնդիրներու շուրջ շատ մը բողոքներ ունինք Կեդրոնին դէմ, որոնց մասին ուրիշ առիթով):

Արդ, նկատելով որ 93 անգլ. ոսկիի նպաստը ոչ թէ հատի մը նուիրատուութիւնն է, այլ շատ մը աղնիւ հաշիւներու լուծմանը կան անոր մէջ, նկատելով որ մը կարօտ հայրենակիցներ հոս անմիջական նպաստի կարիք են այսօր եւ պիտի ըլլան վաղը, նկատելով որ այս եւ Վարչութեան վարչական կարգադրութեան հոգը Կեդր. Վարչութեան կը պատկանի առաւելագոյն, մենք զարմանալով գտնենք անոր լուծելու, հետեւաբար այսու կը խնդրուի որ արագ եւ շրջահայեաց գործունէութեան միջոցով Վարչութիւնը:

Ի Դիմաց Զ. Վ. Միութեան Հայկ պի Մասնաճիւղի Վարչութեան

Ատենագալիք

Մ. ԹՈՒԽՄԱՆԵԱՆ

Ատենագալիք

Մ. ՓՈՒՍՈՒԼ

Հայկ պ, Մայիս 5, 1928

ԱՐԺԵՑՆԵՆՔ ՄԵՐ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ամէն շարժում եւ գործ, ըլլայ մեծ կամ փոքր, օր կար կամ վնասակար, իր վերջաւորութեան հետք մը կը ձգէ բարի եւ օգտակար է սկսուած շարժումը, սահման է մեծնալու եւ գեղեցկանալու:

Ահա այսպիսի շարժում մըն է որ սկսած է մեր Վերաշինար Միութիւնը, որ մեզ բոլորիս կը վերաբերի հաւաքագէտ: Ծարժումը որ մենք սկսած ենք, ինքնահաւաք ու վաղուան Նոր Չնգուչի կառուցման համար է եւ ապա վաղար պիտի ըլլայ օրհնաբեր մեղի՝ վերապրող Չնգուչիներու համար: Ասիկա ճշմարտութիւն մը ըլլալով, մեզ մէկը պիտի չուզէ ինքզինքը զրկել իր աշխատութիւնը բերելու ի նպաստ սկսուած շարժումին:

Ուստի անդամագրուինք Վերաշինարի մասնաճիւղի եւ խտացնենք շարքերը, տրամադրելով մեր աշխատանքը խորհուրդները, որպէս զի այս շարժման արդիւնք օրով իսկ տեսնենք:

Մեզմէ շատեր տակաւին կ'օրօրուին անցեալին ունեցած անձնական քիմիաներով ինքններով եւ դուրս մնան Միութենէն: Ժամանակն ու կեանքի փորձառութիւն մեզ կը պարտադրեն որ մոռնանք մեր քիմիաներով ինքն եւ հաւաքուինք Միութեան շուրջ կատարեալ անկեղծութեամբ, որպէս զի օգտակար ըլլանք:

Օրինակով մը վերջացնեմ ըսելիքս: Լուսահոգի Պետրոսին մասին շատերս լսած ու իմացած ենք, որ ու աղղեցիկ մէկն էր եւ Աւետարանն ալ իր անութին տակ պահէր միշտ: Սակայն երբ գործը դատարանի ու կատարութեան հետ ըլլար, Աւետարանը սուրբ կը թողուր բնական «Դատարանին մէջ Աւետարանը տեղ չունի, հոն սուտի ծիծի ու կաշառակերութեան տեղն է», ու իբր այդ կ'երթար հոն:

Հայրենակիցներ, մեր Վերաշինարի ժողովները ոչ թէ քական դատարաններ են եւ ոչ ալ կատարաւարչատուններ մեր խաղաղասիրութեան ու շինարարութեան սկզբունքները թողելով ժողովներու երթմանք եւ կամ այս ինչ ու ինչ անհատին համար Միութեան շարքերէն դուրս մղելու, իբրեւ ձեռք մեծ կղբալիք, պիտի թելադրէ որ ի մեզ ծննդավայրի անուան յաւերժացումին՝ պղտիկցնենք մեծ եսերը ու մեր սրտերը բանալով իրարու՝ արժեքներով թափած աշխատանքները:

Ուրեմն դէպի գործ, որովհետեւ առանց լաւ գործի հետք ձգելով այս աշխարհէն մեկնելը, մեզ համար կան մեռնիլ պիտի ըլլայ:

ԱՍԼԱՆ Ս. ՍԸՐԸՍ

Սէլմա, Քալիֆ.

ՓՈՔԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՄԸ

Յարգ չկրցայ հասկնալ Շիքակոյի նախկին մասնաճիւղի զիւանին հրատարակած կոչին իմաստը եւ կամ մեր հայրենակիցներու ըմբոստութեան շարժառիթը, ըմբոստութիւն մը՝ որ առիթ տուաւ կարգ մը գորութիւններու Ամերիկահայ մամուլին մէջ եւ որ պարզեց մեր ներքին անբաղձալի պատկերը: Ես խորապէս ցաւելով Շիքակոյի մէջ պատահածներուն վրայ, կը գատապարտեմ ըմբոստներու բռնած ընթացքը, ինչու որ այդ քայլը անխորհուրդ գործունէութեան մը արդիւնքն էր, որուն մէջ ո՛չ հայրենասիրութիւն եւ ո՛չ ալ փշուր մը անկեղծութիւն գոյութիւն ունէր, այլ կը բղխէր եսամոլութենէ եւ ինքնահաւանութենէ:

Թող ներեն ինձ իմ յարգելի հայրենակիցներս, որ ես իբրեւ իրազեկ մէկը մեր ներքին անցուղարձերուն, ցարդ այս խնդիրներուն չանդբարձայ: Ես սպասեցի, ներքին աշխատանք կատարեցի տեսնելու համար թէ իսկապէս տեղի ունեցող պայթարին մէջ կա՞ն կարեւոր խնդիրներ, որոնց համար մեր պոռոտախօսները հրապարակ իջած եւ կուսակցական կիրքերով լեցուն մեր հայրենակցական տունը քանդել կ'աշխատէին: Ես չտեսայ ոեւէ կարեւոր խնդիր, իսկ եթէ իրենք իրենց ձեռքին մէջ ունին գրական, հիմնական փաստ մը, թող բարի ըլլան հրապարակ դնելու, որ մենք ալ հասկնանք: Կարելի է մենք ալ մեր ըսելիքը կ'ունենանք օրինական միջոցներով եւ ոչ թէ պաշխօզուք գործունէութեամբ: Ի՞նչ, իրենց եսին համար Վերաշինա՞ցը ջլատել կ'ուզեն, առանց ամօթ զգալու կամ խղճահարելու մեր թըռուառ քեկորներուն վրայ:

Կը ցաւիմ որ անոնք տարրական իսկեցողութիւն ունեցած չեն եւ իրենց անխորհուրդ քայլը այժմ շատ սուղի կը նստի մեզի: Լաւ է ետ քաշուին եւ խնայեն մեր ջանքերուն՝ եթէ այսպէս միշտ խոչընդոտներ պիտի յարուցանեն: Ես որպէս ծանօթ մէկը, իմ ձեռքս խղճիս վրայ դնելով կ'ըսեմ. — Ո՛չ, հայրենակիցներ, Կեղը. Վարչութեան մէջ կամ մեր ամբողջ Վերաշինացին մէջ կուսակցական շարժում ո՛չ եղած է եւ ոչ ալ պիտի ըլլայ: Կեղբոնական Վարչութեան անդամները, ըլլայ անցեալ կամ այս տարուանը, այնքան անկեղծ, այնքան հայրենասէր եղած են մեր հայրենակցական գործերուն մէջ, որ կրնամ ըսել թէ շատ ժամանակ կուսակցական գործերու կարեւորութիւն տուած չեն, որքան մեր վերաշինական գործերուն: Ես կը գնահատեմ անոնց աշխատութիւնն ու անկեղծութիւնը եւ կը մաղթեմ ուժ ու կորով՝ մինչեւ մեր նըպատակին իրագործումը:

Ըսեմ նաեւ թէ, եթէ մենք մեր իրաւունքը կամ քուէներու արժէքը ըմբոստենք, Կեղբոնը լաւագոյնս կրնայ այս րնկերութեան մեքենան շարժման մէջ դնել: Եթէ մենք անտարբեր դիրք բռնենք, անվատահոթիւն յայտնենք, անոնք բարոյալքուած պիտի զգան եւ գործ պիտի չկրնան տեսնել: Ուրեմն մեր նպատակը իրականացնելու միակ միջոցը մէկ սիրտ, մէկ հոգի աշխատելն է: Ամէնքը մէկին, մէկը ամէնքին համար, այս պէտք է ըլլայ մեր կարգախօսը:

Մենք չինել պիտի աշխատինք, ոչ թէ քանդել. քանդելը դիւրին է, բայց չինելը դժուար: Ուրիշներ չսեցնենք: Եթէ կայ մէկը որ պէտք է սեցնել, այդ րնքը մեր Գերագոյն Ժողովին մէջ:

Ինչո՞ւ Կեղբոնը կը զրպարտեն, ինչո՞ւ տարբեր մեկնութիւններ մէջտեղ կը դնեն: Մեղք է իրենց աշխատութեան եւ մեղք մեր անտէր քեկորներուն:

Պէտք է սթափի Շիքակոն եւ մէկ կողմ նետէ իրարատեսաց գործունէութիւնը: Անցեալը պէտք է թաղել, անիկա եղած է անխորհուրդ: Այդ կերպ գործելը մեր ազգային կեանքի

ընդհատմանը եղած է շարունակ, տուժած ենք խաբուելով ուրիշներէ: Գրքեցէք մեր պատմութիւնը եւ պիտի տեսնէք որ մենք ազգովին միշտ զոհ գացած ենք օտարներու շահամոլութեան: Ասիկա ի հարկէ անոր համար որ առանց խորհելու մտած ենք կրակի հնոցին մէջ եւ շատ ուշ զգացած ենք մեր սխալը: Ուստի կը խնդրեմ որ մեր հայրենակիցները գէթ հիմա ընդունին իրենց սխալը, գիրար հասկնան եւ զրկեն իրենց ներկայացուցիչները Միութեան Գերագոյն Ժողովին, հոն կարգադրելու վէճերը, որպէսզի յետոյ կարենանք անսայթաք կերպով ընթանալ դէպի վերաշինութիւն:

Ս. ՅԱԿՈԲԵԱՆ

ՆԱՄԱԿ ԽՄԱԳՐՈՒԹԵԱՆ

«Ծօվառ»ի Ապրիլ մէկի թիւին մէջ սրտի խորունկ ցաւով կարգացինք այն անհաճոյ արարքները, զորս տեղի կ'ունենան Ամերիկայի մեր հայրենակիցներուն մէջ: Եթէ ոչ Սուրբոյ, գոնէ հալէպարնակ Չնգուչիներու անունով կուգանք մեր նողկանքը եւ ցասումը յայտնել ոեւէ Չնգուչիի հանդէպ, որ անձնական կամ խմբակցական չիլ նկատումներով կը ձգտի վերապրող Չնգուչիներու հոգեկան ու բարոյական յառաջացումին արգելք հանդիսանալ:

Եթէ Ամերիկայի ազատ երկնքին տակ մեր հայրենակիցները հանգիստ ու երջանիկ կեանք մը կ'ապրին, թող քիչ մը բարի ըլլան ուշադրութիւն դարձնելու ովկիանոսէն ասդին՝ օտար հոգերու վրայ օրհասական ժամեր ապրող իրենց խրեակներուն վրայ, որոնք սեւեռուն նայուածքով ամերիկական հայրենակիցներէ եւ հայրենակցուհիներէ կ'սպասեն հոգեկան ու բարոյական սնունդ, եւ ինչո՞ւ չէ, նիւթական օգնութիւն եւս: Անոնք ակնկառոյց կ'սպասեն այն օրուան, յորում իրականացած պիտի ըլլայ Նոր Չնգուչի մը կառուցումը Արարատի մէկ կուշտին:

Ախ մը մնացած ենք, հայրենակիցներ, եւ եթէ մեր այս համեստ ուժն ալ ցրուենք անջատուինք ու ըստ կամս գործենք, լաւագոյն է որ մեր գերեզմանի քարերը մեր ձեռքով պատրաստենք: Մենք անհատներ չենք ճանչնար եւ ոչ ալ կողմերու հակառակ կամ պաշտպան ենք, մենք մեր թուքը կը նետենք անոր երեսին՝ որ կը ժպտահի մեր սիրելի ծննդավայրի Վերաշինացին վսեմ գործը խանդարել, քանդել, մենք կը բաղձանք զօրաւոր միութեան մը, անկեղծ համերաշխութեան մը եւ առողջ Կեղը. Միութեան մը, որ կարենայ գիտակցօրէն վարել մեքենան՝ իրականացնելով բոլոր Չնգուչիներու բաղձանքները, սահմանէն ասդին եւ անդին:

Առանց համերաշխութեան, առանց կատարեալ միութեան եւ առանց կեղբոնացեալ դրութեան՝ մեր ջանքերը յուժպէտս վատնել պիտի նշանակէ: Մէն մի Չնգուչիի նշանաբանը ըլլալու է Չնգուչիին հետ եւ Չնգուչիին համար:

Հայրենակիցներ, կիրքերը ե՛տ, Չնգուչի Վերաշինացը առա՛ջ, այս է մեր բաղձանքը եւ գուցէ մեր նահատակներուն ալ կտակը:

Ի Դիմաց Զ. Վ. Միւրքեան Հալէպի Մասնամիւլի Վարչութեան

Ատեմադպիր

Մ. ԹՈՒԽՄԱՆԵԱՆ

Ատեմապետ

Մ. ՓՈՒՍՈՒԼԵԱՆ

ՃՇԴՈՒՄ

Մոռացումի հետեւանքով «Ծօվառ»ի նախորդ ամսուան համարին թուականը չէր փոխուած: Պէտք է ըլլար Յունիս 1, Թիւ 6, փոխանակ Մայիս 1, Թիւ 5ի:

ՊԱՏԳԱՄԱՌՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ

26գլոյ Վերջ. Միութեան Կեդրոնին կողմէ մեզի զըր-
կուած վերջին շրջաբերականէն կը տեղեկանանք թէ, Միու-
թեան հինգերորդ Պատգ. Ժողովը պիտի գումարուի Օգոստ.
4—5ին, Վէսթ Նիւ Եորքի մէջ:

Ժողովի վայրն է՝

LABOR LYCIUM HALL

Tyler Place, 17th St., West New York, N. J.

Խմբագրութիւնս Պատգ. Ժողովի գումարման առթիւ իր
տետութիւններն ու քեղադրութիւնները կ'ընէ յաջորդ քի-
ւով:

ՊԷՏՔ Է ՈՅԺ ՏԱԼ ԿԵԴՐՈՆԻՆ

Կ'ուզեմ այս երկտողովս Չնգլոյ Վերջ. Միութեան մաս-
նաճիւղերուն եւ բոլոր անհատ հայրենակիցներուս իմացնել
թէ ամէն Չնգլոյ իր նրկեական զոհաբերութիւնը ըրած է,
մինչեւ իսկ իր չունեցածէն, օգնելու համար կարօտեալնե-
րուն: Բայց լսեցէք, Չնգլոյցիներ, այսօր այդ ձեր կաթիլ
կաթիլ զոհաբերութիւնները՝ Վերաշինացի դրամը՝ կարգ
մը ապրկարներ կ'ուզեն փաստաբաններու կողմէն ի վար
սահեցնել: Ինչո՞ւ: Որովհետեւ մէջը ոչինչ ունին իրենք: Ա-
նոնք ոչինչ տուած են, եւ եթէ տուած են՝ այն ալ իրենց սը-
նափառութիւնը զգուցելու համար տուած են: Չնգլոյցիներ,
կը տեսնէ՞ք թէ ձեր կաթիլ կաթիլ զոհած դրամը դատարան-
ներու մէջ յամպէտս կը վատնուի: Ա՞յս պիտի ըլլար Վերա-
շինացի դրամը:

«Մօվաւ»ի կամ Կեդրոնին մէկ մէկ գրութիւն գրելով եւ
եսամով պարոնները աշխարհի մէկ ծայրէն միւսը բոլոր Չն-
գլոյցիներու առջեւ խայտառակելով մեր գործը լրացուցած
չենք ըլլար: Պէտք է բոլոր մասնաճիւղերն ու անհատ Չն-
գլոյցիները թեւ ու թիւունք կենան Կեդրոնին, որպէս զի
վերջին 3000 տոլար դրամը փաստաբաններու ճանկէն: Պէտք
է վեհանձն Չնգլոյցիներու պէս տէր դառնանք մեր դրամնե-
րուն: Չեւանձալ նստելու ատենը չէ, պէտք է ոյժ տալ Կեդ-
րոնին, ոյժ ամէն կարելի միջոցով:

Հարկ է դատաւարանի պառակտիչները եւ Վերաշինացի
դրամին հետ շարաշաօրէն վարուողները: Պէտք է զգացնել
անոնց թէ ո՞վ են իրենք եւ ո՞ւր կը կենան:

ՃԱՆ ԱՇՏԱՐԱԿԵԱՆ

Ֆրէզնո, Քալիֆ.

ՀԱՐՍԱՆԻՔ

1928, Յունիս 3ին տեղի ունեցաւ հարսնական հանդէսը Պրն. Սիմոն
Պապեանի ընդ Օր. Էթլը Լիւլէճեանի, Ֆիլատէլֆիոյ Սր. Գրիգոր Լուսա-
ւորիչ եկեղեցւոյ մէջ՝ երկուստեք բարեկամներու ներկայութեան:

Պսակի խորհուրդը կատարեց նոյն եկեղեցւոյ հովիւ Տէր Նշան քնյ.
Փափազեան: Հարսնուորներ յետոյ իջան եկեղեցւոյ սրահը, ուր նախա-
պէս պատրաստուած սեղաններու շուրջ բոլորուելով՝ վայելցին իրենց
հրամցուած ուտելիքները, պտուղներն ու զովացուցիչ ըմպելիքները:
Սեղանապետի պաշտօնը վարեց Պ. Կ. Եկուան, որ զեղեցիկ ծաղկեփունջ
մը նուիրեց հարս ու փեսայն Չնգլոյ Վերջ. Միութեան Ֆիլատէլֆիոյ
մասնաճիւղին կողմէ, ի ղեկավարութիւն Պրն. Պապեանի կատարած աշ-
խատութեանց՝ Միութիւնը Ֆիլատէլֆիոյ մէջ զօրացնելու եւ տեւակա-
նացնելու համար:

Կնքահայր Պրն. Սարգիս Պօղոսեան կարգաց քսանէ աւելի շնորհա-
ւորական հեռագիրներ, որոնք զրկուած էին Նիւ Եորքէն, Լօրէնսէն, Շի-
քալոյէն, Քալիֆօրնիայէն եւ այլ վայրերէ:

Հարսանեական ուրախութիւնները տեւեցին մինչեւ դիւրեք ժամը 11:
Նուազը եւ հայկական պարերը մեծ ոգևորութիւն ստեղծեցին եւ հաճելի
բերկրանք պատճառեցին բոլոր ներկայներուն:

Չնգլոյ Վերջ. Միութեան Կեդրոնը ուրախակցելու համար իր մէկ
անդամին հետ, անոր ամուսնութեան առթիւ, իր առեւտրական Պրն. Ս.

Մաթոսեան եւ տեղնադպրը՝ Պրն. Ա. Փապուճեան զրկած էր
տէլֆիա ներկայ ըլլալու հարսանիքին եւ անձամբ յայտնելու իր
զակցութիւնը: Վերոյիշեալներուն կ'ընկերակցէին Վէսթ Նիւ Եորք
հայրենակիցներ Տէր եւ Տիկ. Ա. Մինասեան՝ իրենց փոքր աղջկան
հետ հետ, Պ. Էրմոյեան, Աւետիս Թուրոյեան, Ս. Փապուճեան
Փապուճեան (Պոսթոնէն), որ այդ շարքու զուգարկութեամբ մը
Եորք կը գտնուէր:

Երբ հարսն ու փեսան Ուաշինկթըն մեկնեցան՝ հոն անցնելու
մեղրալուսինը, հարսնեւորներէ ոմանք հաւաքուեցան Տէր եւ Տիկ.
Կէօկաշեանի տունը՝ ճորտ սեղաններու շուրջ բոլորուած ուրախու-
նը շարունակելու մինչեւ յաջորդ առաւօտ, երբ Նիւ Եորքէն եկա-
պահ մը հանգստանալէ յետոյ, ինքնաշարժով ուղեւորեցան իրենց
զերը:

Այս առթիւ խորին շնորհակալութիւն կը յայտնենք Տէր եւ
Կէօկաշեանի, իրենց ցոյց տուած սրանչիւի ասպնջականութեան
մար: Կը շնորհաւորենք Պապեան եւ Լիւլէճեան ընտանիքները եւ
բաւտիկ ու երջանիկ տարիներ կը մաղթենք նորապսակ ամուսին:

«Մօվաւ»ի խմբագրութիւնը առանձնապէս իր սրտագին շնորհա-
լիւնները կը յայտնէ իր աշխատակցին եւ եւանդուն գործակցին՝
Սիմոն Պապեանի ամուսնութեան առթիւ, վստահ ըլլալով թէ ան
վերջ ալ իր տաք ու խանդակաթ վերաբերումն ու գործակցութիւնը
տի շարունակէ ի նպաստ Չնգլոյ Վերջ. Միութեան հօրացման:

Թ.Պ.

ՉՆԳՈՒՇՅԻՆԵՐՈՒ ԿԵԱՆՔԷՆ

ՄԱՐՍԻՅԻ.— Հայրենակցուհի Տիկին Պաթուկ Չաղմանեան
մը աւելի է, որ հիւանդ անկողնոյ կը ծառայէ: Ուրախ ենք ըսել
այժմ բաւական լաւացած է: Մեր խնդակցութիւնը կը յայտնենք:

*** Լօրէնսի մեր հայրենակիցներէն Պրն. Պետրոս Գուստիան
ժամանեց: Բարի դալուստ կը մաղթենք իրեն:

ԼՐԵՆՍ.— Տէր եւ Տիկին Պ. Տիւօեան աղջիկ դաւակ մը ունեն
Մեր խնդակցութիւնը կը յայտնենք: Տէր եւ Տիկ. Մ. Խնդիկեան
զաւակ մը ունեցան: Նոյնպէս մեր խնդակցութիւնները:

*** Պրն. Պետրոս Գաղանճեան 4 ամիս է որ յօգացաւ հիւան
թեամբ կը տառապի: Մեր ցաւակցութիւնը յայտնելով շուտափոյ
պաքինում կը մաղթենք:

*** Պրն. Պ. Աղնաւորեան եւ Ա. Ոսկերիչեան բաւական մը ա-
պեցան յօգացաւ: Այժմ լաւացած եւ իրենց գործերուն լծուած են:
ուրախութիւնը կը յայտնենք: Նոյնպէս Պաւ Չնիօեանի:

*** Փոքրիկ Չմրուխտ Մաշուրեան աղանջի ցաւով քանի մը օրէ
հիւանդանոց կը մնայ, շուտափոյթ ապաքինում կը մաղթենք փոքր:

*** Լօրէնսի մէջ «Մօվաւ»ի համար հանդանակութեան ցանկ մը
ցուած եւ բաւական կոկիկ դուժմար մը հանգանակուած է: Մանր
նութիւնը կարգաւ «Մօվաւ»ի յաջորդ թիւով:

ՍԱՐԳԻՍ ՅԱՆՈՐ

ՇԻՔԱԿՈ.— Համաձայն Չնգլոյ Վերջ. Միութեան Կեդրոնի հրա-
գին, Շիքալոյի մէջ սկսած է հանդերձահաւաքութեան գործը եւ
30 կտոր հաւաքուած է: Այս առթիւ կը խնդրենք բոլոր Չնգլոյցի-
րենակիցներէն, որ իրենց տալիք հանդերձեղէնները հաճին բերել
Տիկին Ղ. Բունեանի բնակարանը՝ 1166 Ուէսթ Կրաւտ Էվընիւ:

ՅՐԷՆՈ.— Տէր եւ Տիկ. Գ. Տաղտիկեանի կրտսեր տղան Արմ.
ալ Յունիս 12ին շրջանաւարտ եղաւ Սէլմայի հայ սքուլէն: Տէր եւ
Գ. Տաղտիկեանի երկու տղաներն ալ ծնած են Չնգլոյ: Գարեգին
տարեկան է, իսկ Արմենակը 18:

ԲԱՐԵԿԼՈՒ

ՆՈՒԷՐՆԵՐ «ԾՕՎԱՌ»Ի

Պ. Պօռօեան, Կլան Ալլըն

Յակոբ Չաղաղարապետեան, Շիքալո
Պաղտասար Չուլճեանի ձեռամբ, Հէյմֆրի

Գումար՝

Մեր շնորհակալութիւնները բոլորին: